«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հայաստանի Հանրապետությունը որպես Անտանտի Դաշնակից: Ակնկալիքներ և հիասթափություն

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գրիգոր Փանոսյան

Երևանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Նունե Ասրյան

Երևան 2023



Հովհաննես Քաջազնունի

Ալեքսանդր Խատիսյան

Համո Օհանջանեան

Սիմոն Վրացյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 6

ԳԼՈՒԽ 2.ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....28

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին աշխարհամարտը և 1917թ. ռուսաստանյան հեղափոխությունները արմատական տեղաշարժեր և փոփոխություններ առաջացրին Ռուսական կայսրության, Անդրկովկասի ու Հայաստանի հասարակական քաղաքական կյանքում։ Հայ հասարակական քաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն եղավ 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին բազմակուսակցական հիմունքներով արևելահայերի համագումարի հրավիրումը։

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի առանձին երկրամասեր, այդ թվում նաև Անդրկովկասը դուրս մնացին նորաստեղծ խորհրդային կառավարության վերահսկողությունից։ 1917թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասի կոմիսարիատը՝ որպես երկրամասի գործադիր իշխանություն, իսկ 1918թ. փետրվարի 10-ից սկսեց գործել նաև Անդրկովկասի խորհրդարանը (սեյմը)՝ որպես օրենսդիր մարմին։ Անդրկովկասի կոմիսարիատի և սեյմի գոյության առաջին իսկ օրերից ի հայտ եկան երկրամասի երեք գլխավոր ազգերի (վրացի, հայ, կովկասյան թուրք կամ ադրբեջանցի) ձգտումները և շահերը։ Այն ավելի բացահայտ դրսևորվեց 1918թ. սկզբներից՝ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների վերսկսման պայմաններում։ Անդրկովկասի կառավարությունում և սեյմում իր քաղաքական կշռով երրորդը համարվող ՀՅԴ 1918թ. հունվարի վերջից թուրք-անդրկովկասյան հրադադարի խախտման և թուրքական զորքերի Կովկասյան ռազմաճակատի երկայնքով հարձակման պայմաններում, այլևս աննպատակահարման, անգամ վտանգավոր էր համարում ինքնորոշման սկզբունքով Անդրկովկասի ու Հայաստանի անջատումը Ռուսաստանից։ Հովհաննես Քաջազնունին, հանդես գալով սեյմի փետրվարի 15-ի նիստում, պնդում էր, որ Անդրկովկասը պետք է մնա Ռուսաստանի անբաժան մաս։[1]

Հայոց ազգային խորհուրդը, սեյմի ՀՅԴ խմբակցությունը, մյուս քաղաքական ուժերը Ռուսաստանի հետ դաշնային կապի գաղափարը հետևողականորեն

[1] Տես Кавказское словоб 17 февраля, 1918

պաշտպանում էին այնքան ժամանակ, քանի դեռ դրսից Թուրքիան, իսկ ներսից վրացական և երկրամասի մուսուլմանական անջատողական ուժերը չէին դրել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախանալու խնդիրը։

Արդյունքը շտկեցին Տրապիզոնում ընթացող թուրք-անդրկովկասյան անջատ բանակցությունները։ 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը հիասթափեցրեց անդրկովկասյան իշխանություններին։ Զ. Ավալովի վկայությամբ՝ Անդրկովկասի անջատմանը թափ հաղորդեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Բաթումի և Կարսի հանձնումը թուրքերին։[2]

1918թ. ապրիլի 9 Թուրքիայի պահանջով Անդրկովկասի սեյմը հռչակեց Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության (ԱԺԴՀ) անկախությունը։ Անդրկովկասյան իշխանությունները հույս ունեին, որ երկրամասի անկախության հռչակումն իրավական հիմք կտա թուրքերի հետ խաղաղ բանակցությունները վերսկսելու և հաշտություն կնքելու։ 1918թ. մայիսի 11-ին Բաթումում սկսած թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունները արդյունք չտվեցին, քանի որ թուրքերը Բրեստ-Լիտովսկի պայմանագրից շատ ավելի կողոպտիչ պահանջներ ներկայացրին, և թուրք-անդրկովկասյան բանակցությունները դարձյալ մտան փակուղի։ Բանակցությունների ձախողումը մի կողմից, թուրքերի շարունակական հարձակումը՝ մյուս կողմից, և դրան ի պատասխան՝ երկրամասը պաշտպանելու անկախությունը Անդրկովկասի նորաստեղծ հանրապետությանը կանգնեցրին քաղաքական ճգնաժամի առաջ։

1918թ. գարնան վերջին հակասություններ էին առաջացել իրեն անկախ հռչակած ԱԺԴՀ թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի (սեյմի) ներսում։ Հայերը ներքուստ կողմնորոշված էին դեպի Ռուսաստան, Կովկասի մահմեդները դեպի Թուրքիան, վրացիները իրենց շահերի թելադրանքով դեպի Գերմանիան։

Սրված տարաձայնությունների պատճառով Անդրկովկասի դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի։

1918թ. մայիսի 26-ին գումարվեց Անդրկովկասի սեյմի վերջին նիստը։ Սոցիալ-դեմոկրատական խմբակցությունն առաջարկ մտցրեց սեյմի արձակման և Անդրկովկասի դաշնության կազմալուծման մասին։ Նույն օրը նույն դահլիճում Վրաց

[2] Տես Авалов З. Независимость Грузии в международной политики 1918-1921гг. Париж 1924 էջ 12

ազգային խորհուրդը, Ն. Ժորդանիայի նախագահությամբ, մեծ հանդիսավորությամբ Վրաստանը հռչակեց անկախ պետություն։

1918թ. մայիսի 27-ին մուսուլմանների ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն հայտարարեց «Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության» (ԱԿՄ) անկախության մասին, որին, ի դեպ, հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին «Ադրբեջան»։ Հայոց ազգային խորհրդին այլ բան չէր մնում, քան կողմնորոշվել դեպի Հայաստանի անկախությունը։ Մայիսի 28-ին և 29-ին գումարվեց ՀՅԴ արևելյան և արևմտյան բյուրոների ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի, սեյմի և Հայոց ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստ և որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն։

Երեք օրվա ընթացքում Անդրկովկասի դաշնության փլատակների վրա հիմնվեցին երեք անկախ պետություններ՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները։

ԳԼՈՒԽ 1. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հայաստանի անկախության հաստատմանը հաջորդեցին դիվանագիտական առաջին քայլերը։ Հայաստանի Հանրապետության միջազգային դիվանագիտական առաջին փաստաթուղթը Բաթումի հաշտության պայմանագիրն էր, որը ստորագրած Ա. Խատիսյանն էլ 1918թ. հուլիսին Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակվեց արտաքին գործերի նախարար։ Հանրապետության կառավարության համակարգում մեծ տեղ էր գրավում արտաքին գործերի նախարարությունը։ Դա պայմանավորված էր Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակով և երկրի առջև ծառացած դժվարագույն խնդիրների լուծմամբ։ Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Թուրքիայի պարտադրանքով Հայաստանի դիվանագիտական գործունեությունը սահմանափակված էր։ Բաթումի պայմանագրի ստորագրման նախօրեին՝ հունիսի 3-ին Թուրքիայի ճնշման ներքո Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանը ստորագրել էր պարտավորագիր, ըստ որի Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր պատերազմի ընթացքում չունենալ որևէ «դիվանագիտական» կապ այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ։ Հայաստանը չպետք է դիվանագիտական հարաբերություններ ու շփումներ ունենար ամենից առաջ Համաձայնության դաշինքի (Անտանտի) և նրան հարող երկրների հետ։

Հայաստանի դիվանագիտական հարաբերությունները սկզբնական շրջանում սահմանափակվում էին Քառյակ միության երկրների և անմիջական հարևանների շրջանակներում։

Վրաստանում հիմնվեց Հայաստանի դիվանագիտական առաքելություն՝ Արշակ Ջամալյանի գլխավորությամբ։ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից հյուպատոսական բաժանմունքներ հիմնվեցին Բաթումում, Թիֆլիսում և Փոթիում, որոնցից գլխավորը Բաթումինն էր։ Այդքան հայտարարությունների գոյությունը պայմանավորված էր Վրաստանում մեծ թվով հայ ազգաբնակչությամբ ու նրա տարածքով իրականացվող Հայաստանի առևտրատնտեսական կապերի կարևորությամբ։ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական առաքելության աշխատանքը կարևորվում էր նաև նրանով, որ

այդտեղ էր դաշնակից տերությունների գերագույն կոմիսարների նստավայրը, որում գլխավոր դերակատարությունը պատկանում էր Անգլիային։

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ դիվանագիտական փոխհարաբերություններին Հայաստանում Թուրքիայի ռազմական ներկայացուցիչ էր նշանակվել Մեհմեդ Ալի փաշան։ Հայաստանի Հանրապետության համար կենսական կարևոր էր քիչ թե շատ տանելի հարաբերությունների ապահովումը Հայաստանի ամենավտանգավոր ախոյանի Թուրքիայի հետ։

Հունիսի երկրորդ կեսից Կ. Պոլիսում էր գտնվում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ։ Առաքելության նպատակն էր հասնել նրան, որպեսզի վերանայվի Բաթումի պայմանագրի ստորացուցիչ պայմանները և համապատասխանեցվեն Բրեստի հաշտության պայմաններին։ Բացի այդ ամենից պատվիրակությունը, ամիսներ շարունակ Թուրքիայում իրականացնում էր նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործառույթները։ 1918թ. նոյեմբերին պատվիրակությունը վերադարձավ, Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր ներկայացուցիչ նշանակվեց Ֆ. Թախտաջյանը։ Հայաստանի և Թուրքիայի միջև այդպես էլ դիվանագիտական կապեր չհաստատվեցին։

Բաթումի պայմանագրի վերանայման առաքելությամբ Քառյակ միության երկու երկրների մայրաքաղաքներում՝ Բեռլինում և Վիեննայում, դիվանագիտական-բանակցային աշխատանք էր տանում Հ. Օհանջանյանի գլխավորած պատվիրակությունը։ Երկու դեպքում էլ հայկական պատվիրակություններն արդյունքի չհասան։ Այդ իրավիճակը շարունակվեց մինչև 1918թ. նոյեմբերը։ Երբ ավարտվեց Առաջին աշխարհամարտը, պարտված Թուրքիան հեռացավ Անդրկովկասից։ Հայաստանը դեն նետեց Բաթումի կաշկանդիչ պայմանները, և որպես հաղթանակած Անտանտի փոքր դաշնակից, սկսեց ակտիվ արտաքին քաղաքականություն վարել ու դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակել Անտանտի և այլ պետությունների հետ։

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հարաբերությունների կարգավորումն ու կայունացումն էր անմիջական հարևանների հետ։ Հայաստանի կառավարությունը վերջիններիս հետ

աշխատում էր առաջնորդվել բարի դրացիության սկզբունքով և ծագած վեճերն ու բախումները լուծել քաղաքական բանակցությունների, փոխադարձ համաձայնության ճանապարհով: Անդրկովկասի երեք նորակազմ հանրապետությունների համար ամենացավոտը տարածքային վերքերն էին, որոնք ձևավորվել էին պատմականորեն և ժառանգություն մնացել ցարական տիրապետության ժամանակներից:

1918թ. աշնանը Հայաստանի և Վրաստանի միջև վեճ ծագեց Ախալքալաքի և Լոռիի սահմանային խնդրի շուրջ, որը դեկտեմբերին վերաճեց պատերազմի: 20-րյա այդ պատերազմը զգալի դժվարություններ ստեղծեց Հայաստանի ու վրացահայության համար: Բախման փոխզիջումային հարթումից հետո հայ-վրացական հարաբերությունները սկսեցին բարելավվել: 1919թ. փետրվարի 25-ին Թիֆլիսում վերսկսեց իր գործունեությունը Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Անդրկովկասյան տարածաշրջանում, այդ թվում Հայաստանում հաստատվեցին սնգլիական, ֆրանսիական, իտալական ռազմաքաղաքական և դիվանագիտական ներկայացուցիչներ: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության առաջնային խնդիրներից մեկը օտար պետությունների կառավարական, դիվանագիտական շրջանակների հետ աշխատանքներ տանելով, Հայկական հարցի լուծմանը նպաստելն էր: Հայակական հարցի լուծումն արագացնելու և հայ ժողովրդի անվտանգությունը թուրքական հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու 1919թ. օգոստոսին Հայաստանի խորհրդարանը հուշագիր ընդունեց՝ ուղղված Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի այն երկրների խորհրդարաններին, որոնք դիվանագիտորեն ճանաչել էին Հայաստանը: ՀՀ-ի միջազգային ճանաչումն ապահովելու և հանրապետության առջև ծառացած քաղաքական ազգային-պետական անվտանգության, տնտեսական, առևտրային, հումանիտար և այլ խնդիրներ լուծելու համար երկու տարում դիվանագիտական կապեր հաստատվեցին և շփումներ իրականացվեցին աշխարհի 40-ից ավելի պետությունների հետ: Դիվանագիտական ներկայացուցչություններ ու հյուպատոսություններ բացվեցին Փարիզում, Լոնդոնում, Հռոմում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Պեկինում, Բրյուսելում, Բելգրադում,

Բուխարեստում, Աթենքում, Մադրիդում, Ամստերդամում, Բեռլինում, Կահիրեյում, Թեհրանում, Թիֆլիսում, Բաքվում, Դոնի Ռոստովում, Կիևում և այլուր։[3]

Դժվարին պայմաններում էր աշխատում Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական առաքելությունը։ 1919թ. մարտ ամսից Բաքվում ներկայացուցիչ էր նշանակվել Տ. Բեկզադյանը։ Հայաստանը ջանում էր հարաբերություններ հաստատել Ադրբեջանի հետ։ Կնքվեցին մի շարք պայմանագրեր։ Սակայն երկու երկրների միջև առկա քաղաքական անբարենպաստ հանգամանքները թույլ չտվեցին լրիվ ծավալով իրագործել այդ համաձայնագիրը։ Թուրքիան հրահրում էր թշնամական քաղաքականություն հայկական մի շարք գավառների նկատմամբ։ Հայաստանի ձեռնարկած արտաքին խաղաղասիրական, բարիդրացիական հարաբերություններ հաստատելու փորձերը արդյունք չտվեցին։ Չնայած դժվարություններին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը գործեց նաև Ադրբեջանի խորհրդայնացումից հետո մինչև 1920թ. վերջերը։ Իր հերթին 1919թ. մարտին Երևանում բացվեց Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը Ալի խան Թեքինսկու գլխավորությամբ։ Բայց պարզվեց, որ Ադրբեջանի ներկայացուցչությունը զբաղված է ոչ թե դիվանագիտական աշխատանքով, այլ լրտեսական քայքայիչ գործունեությոմբ ռազմական բնույթի գաղտնիքներ հաղորդելով, Հայաստանում թուրք-թաթարական խռովություններ կազմակերպելով։ Ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեջանի վարած թշնամական քաղաքականության, բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Հայաստանի հարևան Պարսկաստանի հետ։ Թեհրանում հիմնվեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն։ Լիազոր ներկայացուցիչ նշանակվեց Հովսեփ Արղությանը, որը 1920թ. հունվարի 4-ին հասավ Թեհրան և անցավ իր պարտականությունների կատարմանը։[4] Հայաստանի Հանրապետության դիվանագիտական, քաղաքական, տնտեսական գործունեության ուղղություններից մեկը Ռուսաստանն էր՝ իր բոլոր պետական կազմավորումներով։ Հայաստանի իշխանությունները չկարողացան նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Խորհրդային

[3] Տես ՀՀԱ,Ֆ. 200գ. 1գ. 427 (մաս I) թ. 19

[4] Տես Զոհրաբյան Է. Սովետական Ռուսաստանը և հայ իրանական հարաբերությունները (1920-1922թթ.) Երևան 1985 էջ 32-33

Ռուսաստանի կառավարության հետ, թեև չպետք է անտեսել, որ մի քանի անգամ այդ ուղղությամբ փորձեր արվեցին։ Սակայն խնդիրն այն է, որ ոչ Խորհրդային Ռուսաստանը և ոչ էլ խորհրդային պետական կազմավորումները մտադիր չէին ճանաչելու Հայաստանի անկախությունը։

Խորհրդահայկական կապերի հաստատմանն ամեն կերպ խոչընդոտում էին Անտանտի տերությունները։ Բացի այդ, գաղափարաքաղաքական առումով Հայաստանի կառավարությունը չէր ընդունում բոլշևիկյան վարչաձևը։ Խորհրդային կառավարությունն էլ մտադիր չէր հարաբերություններ հաստատել «իմպերիալիզմի կամակատար, բուրժուական» Հայաստանի կառավարության հետ։ Խորհրդային Ռուսաստանի անբարյացակամության դրսևորում էր 1918թ. հուլիսին հրապարակված դեկրետով Ռուսաստանում գործող հայ ազգային խորհուրդների ու կոմիտեների արձակումը՝ դրանք որակելով որպես բուրժուական հակահեղափոխական մարմիններ։[5]

1920թ. ամռանը Խորհրդային Ռուսաստանը միջնորդական առաքելությամբ Հայաստանում դիվանագիտական լիազոր ներկայացուցիչ նշանակեց Բ. Լեգրանին։

Ի տարբերություն խորհրդային կառավարության բավականին սերտ ու բարեկամական դիվանագիտական կապեր հաստատվեցին Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ, աշխարհագրական առումով դրանք Հայաստանին ավելի մոտ էին և, բացի դրանից, Անտանտի տերությունները ոչ միայն չէին խոչընդոտում, այլև խրախուսում էին նման կապերի հաստատումը։ 1918թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ուկրաինայի կենտրոնական ռադայի կառավարության հետ։ Կիևում հիմնվեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն, իսկ մի շարք քաղաքներում՝ Օդեսա, Խարկով բացվեցին հյուպատոսություններ։

1919թ. հունիսին Սիբիրի կառավարությանը կից հիմնվեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը, և Չամոյանը որպես հավատարմատար, Ուկրաինայից փոխադրվեց Սիբիր։ Առավել սերտ էին հարաբերությունները գեներալ Դինիկինի իշխանության հետ։ Բարեկամական կապեր էին հաստատվել Դոնի,

[5] Տես декреты советской власти, т. 3, Москва, 1964 էջ 15-16

Կուբանի և Թերեքի կառավարությունների հետ, որտեղ հիմնվել էին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններ։ 1919թ. հոկտեմբերին Հայաստանում Դենիկինի զինվորական ներկայացուցիչ նշանակվեց գնդապետ Զինկևիչը։

1919թ. փետրվարից դիվանագիտական-քաղաքական աշխատանքները Փարիզում, Լոնդոնում և եվրոպական մի շարք կենտրոններում գործնականում իրականացնում էր Հայաստանի կառավարական պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ։ Անտանտի մեկ այլ երկրի մայրաքաղաք Հռոմում դեսպան էր նշանակված Մ. Վարդանյանը, իսկ Տոկիոյում հայ առաջին կին դիվանագետ Անահիտ Աբգարյանը։ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանն էր Արմեն Գարոն (Փաստրմաճյան), որը մեծ հեղինակություն էր վայելում օտար շրջանակներում։ 1920թ. մայիսին Ա. Ահարոնյանի լիազորագրով մերձբալթյան հանրապետություններում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Սիմոն Հակոբյանը։

Առաջին աշխարհամարտում պարտված երկրների՝ Գերմանիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի հետ հաշտության պայմանագրեր կնքելու, պատերազմի արդյունքներն ամփոփելու և հետպատերազմական հաշտության պայմանները որոշելու նպատակով 1919թ. սկզբին Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովում քննարկվեց նաև Հայկական հարցը։

Փարիզի վեհաժողովն իր աշխատանքներն սկսեց 1919թ. հունվարի 18-ինև ընդմիջումներով շարունակվեց մինչև 1920թ. հունվարի 21-ը։ Մասնակցում էին 27 երկրների մոտ 2 հազար պատվիրակներ։ Պաշտոնական լեզուներ ճանաչվեցին ֆրանսերենը և անգլերենը։ Վեհաժողովում նախագահում էր Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն։

Սայքս-Պիկոյի համաձայնագրով Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան, որոնց հետագայում միացել էր նաև Իտալիան, համաձայնել էին, որ սևծովյան նեղուցները տրվեն Ռուսաստանին և պաշտպանվեն Անգլիայի ու Ֆրանսիայի հատուկ շահերը։ Սակայն Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան դեմ էին նեղուցները Ռուսաստանին տալուն։ Պայքարի էին ելել վեհաժողովի բոլոր մասնակիցները, որպեսզի աշխարհի վերաբաժանումից ստանան իրենց բաժինը։ Պարտված պետությունների հետ պայմանագրերի նախագծերը

մշակելիս դաշնակիցներն առաջին պլան էին մղում նոր կազմավորվող պետությունների, այդ թվում նաև Հայաստանի պահանջների քննարկումը։

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու արևմտահայերը պատվիրակություններ ուղարկեցին Փարիզ։ Փարիզում հայկական պավիրակներն անջատ հանդիպումներ ունեցան տարբեր երկրների դիվանագիտական առանձին ներկայացուցիչների հետ։

Հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու, Հայաստանի անկախությունը ճանաչելու կոչով այդ ժամանակ Փարիզում գտնվող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին դիմեց Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն հայտնելով 1919թ. փետրվարի 11-ին ընդունած իր որոշումը։ «Հայաստանը,-նշվում էր փաստաթղթում,- ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթները, Կիլիկիան, Տրապիզոնի ծովափը և Ռուսական Հայաստանը պետք է կազմեն առանձին անկախ պետություն»։

Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի քննարկումը ճիշտ հունի մեջ դնելուն որոշակիորեն խանգարում էին սկզբունքային հարցի նկատմամբ Բողոս Նուբար փաշայի և Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունների տարակարծությունները։ Ապագա Հայաստանի տարածքների վերաբերյալ տարակարծություններ կային ոչ միայն հայկական երկու պատվիրակությունների, այլ այդ պատվիրակությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև։ 1920թ. հունվարի 19-ին Փարիզում տեղի ունեցած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստում որոշվեց ճանաչել նաև Հայաստանի կառավարությունը։

Այնուհետև հայկական հարցը տեղափոխվեց Սան Ռեմոյի խորհրդաժողով։ Սան Ռեմոյի խորհրդաժողովում առավել հանգամանորեն քննարկվեց Արևմտյան Հայաստանի հարցը։ Այդ կապակցությամբ Սան Ռեմո էին հրավիրվել հայկական երկու պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը։

Խարհրդաժողովի մասնակիցներին արդեն հայտնի էր, որ ԱՄՆ սենատում մեծ առարկություններ կային Վ. Վիլսոնի առաջարկների վերաբերյալ, որ քեմալական Թուրքիան հասցրել էր իր դիրքերն ամրապնդել Արևմտյան Հայաստանում և առանց ուժ գործադրելու անհնար էր հասնել Հայաստանի անկախությանը։ Սակայն եվրոպական տերություններից և ոչ մեկը Հայաստան զորք ուղարկելու մտադրություն

չուներ, իսկ հայերը չունեին խնդիրն ինքնուրույն լուծելու բավարար քանակի ռազմական ուժ։

Թուրքիայի ասիական տարածքների բաժանման հարցում առաջացած հակասությունները ստիպում էին դաշնակիցներին հետաձգել Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրումը, որը նախատեսված էր նաև 1919թ. ապրիլին, ապա 1920թ. հուլիսին, վերջապես 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում։

Սևրի հաշտության պայմանագրի հիմքում դրված էին 1916թ. Սայքս-Պիկցի համաձայնագրի դրույթներն ու տեսությունների 1920թ. Սան Ռեմոյի խորհրդաժողովի որոշումները։ Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից ընդգրկելով 433 հոդված։ Հայաստանին ամբողջությամբ վերաբերում էին Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածները։ 88-րդ հոդվածում նշվում էր, թե Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը՝ որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ արել են դաշնակից տերությունները։ 89-րդ հոդվածով Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև պայմանավորվող մյուս կողմերը համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումըթողնել ԱՄՆ նախագահի իրավարարությանը և ընդունել նրա որոշումը։ Համաձայն պայմանագրի 90-րդ հոդվածի, սահմանագծի որոշման օրից սկսած Թուրքիան հրաժարվում էր Հայաստանին հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից։ Հոդված 91. Սահմանագծման հանձնաժողովը ստեղծվելու էր երեք ամսվա ընթացքում։ Պայմանագրի 92-րդ հոդվածը սահմանում էր, որ Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները որոշվելու էին այդ պետությունների հետ ուղղակի բանակցությունների միջոցով։ Տարաձայնությունների դեպքում սահմանագիծը որոշելու էին գլխավոր դաշնակից տերությունները՝ սահմանազատումը տեղում գծանշելու պայմանով։ Հայաստանի հետ առնչվում էին Սևրի պայմանագրի նաև 125, 142, 144, 251 և 277-րդ հոդվածները։ Կենսական նշանակություն ուներ հատկապես 251-րդ հոդվածը, ըստ որի Բաթումի նավահանգստով ազատ մուտք դեպի Սև ծով տրվում էին Վրաստանին, Ադրբեջանին և Պարսկաստանին ճիշտ այնպես, ինչպես և Հայաստանին։ Հայաստանի համար

կենսական նշանակություն ուներ Տրապիզոնը նրա կազմում թողնելը: Այդ գաղափարը պաշտպանում էր հատկապես ԱՄՆ-ի կառավարությունը:

Ինչ վերաբերում է Կիլիկիային, որի նկատմամբ հայկական կողմը նույնպես հավակնություններ ուներ, ապա Սևրի պայմանագրով այն չէր նախատեսվում մտցնել ստեղծվող հայկական պետության կազմում, բայց ինչպես նշվել էր ԱՄՆ կոնգրեսում, «հասկացվում էր, որ Կիլիկիան պետք է ունենար ինքնավար կառավարություն Ֆրանսիայի հովանավորության ներքո»:[6]

Այսպիսով, կարծես թե, իրականանում էր հայ ժողովրդի դարավոր երազանքը. ազատագրվելու էր Արևմտյան Հայաստանը, և Արևելյան Հայաստանի հետ միասին ստեղծվելու էր միացյալ և անկախ Հայաստան:

Սևրի պայմանագրի ստորագրումը չէր վկայում, թե հարթվել էին դաշնակից տերությունների միջև Փոքր Ասիայում գոյություն ունեցող տարաձայնությունները: Ընդհակառակը, դրանք ավելի հստակեցվել էին և դարձել անհաղթահարելի:

Սևրի պայմանագրով սահմանվում էին Փոքր Ասիայում դաշնակից տերությունների ազդեցության գոտիները: Այդ գոտիների բաժանման համաձայնագիրն Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև կնքվել էր դեռևս 1920թ. հուլիսի 16-ին Սևրում: Դաշնակից տերությունների կառավարություններից և ոչ մեկը իրական մտադրություն չուներ զորքեր ուղարկելու Արևմտյան Հայաստան: Ուստի պարզ էր, որ Սևրի պայմանագիրը միջազգային մի փաստաթուղթ էր, որը եթե նույնիսկ վավերացվեր հայերին լոկ իրավունք կտար սեփական ուժերով Թուրքիայից խլելու իրանց պատմական տարածքները: Սևրի պայմանագիրը ստորագրողները շատ լավ էին հասկանում, որ դա անհնար է այն պարզ պատճառով, որ Արևմտյան Հայաստանի բնակչությունը ցեղասպանության էր ենթարկվել, իսկ նոր ոտքի կանգնող Հայաստանի Հանրապետությունը չուներ անհրաժեշտ ուժեր իր երկրի սահմաններն արտաքին ներխուժումից պաշտպանելու համար: Բացի այդ, Արևմտյան Հայաստանից գաղթածներին հայրենիք վերադառնալու հնարավորություն չէր ընձեռվում: Քեմալական Թուրքիան չէր հնազանդվելու դաշնակիցների որոշմանն ու սուլթանի ստորագրությանը և խաղաղ ճանապարհով հայերին չէր զիջելու նրանց պատմական

[6] Congressional Record VOL LXIV part 3, p2494

տարածքները: Սևրի պայմանագիրը մարտահրավեր էր քեմալական Թուրքիային և անխուսափելի էր դարձնում թուրք-հայկական պատերազմը:

Սևրի պայմանագրի նկատմամբ ունեցած «խանդավառ ոգևորությունից» Հայաստանի կառավարողները սկսեցին անտեսել Ռուսաստանի դերը Հայ դատի լուծման խնդրում:

Իր հուշերում Հ. Տերտերյանը վկայում է, որ «Սևրի առաջադրած խանդավառ ոգևորության հետևանքով մեր պետական և կուսակցական գործիչներից շատերը թերագնահատելով Խորհրդային Ռուսաստանի դերը Հայ դատի լուծման մեջ, անտեսել էին կարմիր զորամասերի ներկայությունը Հայաստանի սահմաններում և չափազանց մեծ հույսեր էին կապել դաշնակից պետությունների հետ՝ գերագնահատելով նրանց ուժերն ու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակությունն այն կարծիքին էր, որ դաշնակիցներն ինչքան էլ բարիացկամ լինեին Միացյալ և Անկախ Հայաստանի դատը, իսկ խորհրդային իշխանությունն էլ ոչ բարիացկամ, ամենից առաջ նկատի պետք է առնեն մերկ ու դառն իրականությունը: Մեր բարեկամ «Ալիանսը» (նկատի ունի Անտանտը) շատ հեռու էր մեր երկրի սահմաններից, իսկ Խորհրդային Ռուսաստանի զորամասերն արդեն իսկ գտնվում էին Հայաստանի սահմանների վրա և իրական սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի անկախության համար: Ուստի մեր պատվիրակությունը առաջարկում էր մեր կառավարությանն ամեն գնով ու զիջումներով լեզու գտնել խորհրդային կառավարության հետ անգամ Սևրից հրաժարվելու պայմանով, որպեսզի կարողանանք արագացնել կարմիր զորամասերի հեռացումը մեր անվիճելի հողամասերից:

Բացի այդ, միանգամայն սխալ մտայնություն գոյություն ուներ քեմալական շարժման ու Քեմալի զինվորական ուժերի կարողության մասին: Անգլիացիների կողմից մեր հանրապետության տրամադրած ռազմամթերքի ու հագուստեղենի ստուգումից հետո մեր պետական ու կուսակցական որոշ շրջանակներում այն կարծիքն էր տիրում, որ քեմալական ուժերի հետ բախման պարագային հայկական զորամասերը հեշտությամբ կարող են գրավել Էրզրումը և Էրզրումի բարձրավանդակը»:[7]

[7] Տերտերեան Հ. , Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները – Հայրենիք 1954 թիվ 5 մայիս էջ 6

Սևրի պայմանագիրն անիրագործելի էր։ Այն ստորագրվեց Փարիզի վեհաժողովը հրավիրելուց ավելի քան մեկ ու կես տարի անց 1920թ. օգոստոսի 10-ին։ Այդ ընթացքում քաղաքական ուժերի վերադասավորումը ծառայեց Թուրքիայի շահերին։ Անտանտի տերությունների հակաթուրքական վճռական դիրքորոշումը փոխարինվեց Մ. Քեմալի հետ լեզու գտնելու և նրան Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղելու քաղաքականությամբ։ Իրենց հերթին քեմալականները, երկակի խաղ խաղալով, սկսեցին մերձենալ Խորհրդային Ռուսաստանին։

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Թուրքիան Հայաստանի սահմանների վրա կենտրոնացրել էր բազմահազարանոց բանակ: Թուրքական ուժերը զգալի գերազանցություն ունեին հայկական ուժերի նկատմամբ և բացի այդ, Հայաստանը շրջափակում էր չորս ռազմաճակատ՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի:

Պատերազմը սկսվեց սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը: Ռազմական գործողությունները կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլը տևեց ընդամենը մեկ շաբաթ՝ սեպտեմբերի 23-ից 30-ը, երկրորդ փուլը մեկ ամիս՝ հոկտեմբերի 1-ից 28-ը և երրորդը՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 18-ը:

Պատերազմի առաջին փուլում հաջողությունն ամբողջովին թուրքերի կողմն էր: Օգտագործելով գիշերային հարձակումներն ու թևերից շրջանցելու մարտավարությունը, ինչպես նաև ուժերի գերազանցություն ստեղծելով հարձակման հիմնական ուղղություններում, նրանք կարողացան նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում և որոշակի հաջողության հասան՝ գրավելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Սարիղամիշը սեպտեմբերի 28-ին և Մերդենեկը սեպտեմբերի 30-ին:

Հոկտեմբերին հայկական բանակը թե Սուրմալուի, թե Կարսի ճակատներում ակտիվ ռազմական գործողություններ ծավալեց, համառ կռիվներ մղեց՝ թշնամուն հետ շպրտելու համար: Նախապատրաստելով հոկտեմբերի 14-ի հակահարձակումը, հայկական հրամանատարությունը համալրել էր Կարսի ճակատը՝ զինվորների թվաքանակը հասցնելով 12 հազար մարդու հոկտեմբերի առաջին օրերին այդ ճակատում կար 7200 զինվոր, իսկ ճակատի թուրք զինվորների թվաքանակը հաշվարկվում էր մինչև 5 հազար մարդ: Բայց շուտով պարզվեց, որ ռազմաճակատի առանձին հատվածների գործողություններում չկա անհրաժեշտ ներդաշնակություն, թույլ են կապը և համագործակցությունը: Հոկտեմբերի 25-ին Կարսի ճակատում թեժ մարտեր էին ծավալվել: Այդ օրն առավոտյան հայկական զորքերը նոր գրոհ սկսեցին թուրքական դիրքերի վրա: Թուրքերը չբավարարվելով պաշտպանությամբ, իրենց

հերթին անցան հակահարձակման։ Ամբողջ օրը տևած համառ կռիվները կողմերից և ոչ մեկին հաջողություն չբերեցին։ Եվ միայն երեկոյան, հայերը սկսեցին տեղի տալ, կենտրոնը սկսեց նահանջել դեպի Վլադի-Կարս։ Շուտով նահանջեցին նաև Կարսի ճակատի աջ և ձախ թևի զորամասերը։ Առավոտյան հետախուզության միջոցով պարզելով, որ բարձունքների վրա գտնվող հայկական դիրքերը դատարկ են, թուրքերն առաջ անցան և զբաղեցրին դրանք։ Դա լուրջ կորուստ էր հայերի համար, քանի որ ռազմաճակատի գիծն ավելի մոտեցավ Կարսին։

Անկարան չէր կարող շարունակել պատերազմը խորանալով Հայաստանում՝ առանց նախապես պարզելու Արևմտյան տերությունների և հատկապես Ռուսաստանի դիրքորոշումները։ Հոկտեմբերին խորհրդային դիվանագիտությունը ակտիվություն չցուցաբերեց հայ-թուրքական հարաբերությունների հարցում այն առումով, որ ցույց չտվեց, թե չի հանդուրժի թուրքերի հետագա առաջխաղացումը։ Խորհրդային դիվանագիտությանն ավելի շուտ հետաքրքրում էր արևմուտքի հետ քեմալականների որևէ մերձեցում թույլ չտալու, Հայաստանով դեպի Թուրքիա տարանցման իրավունք ստանալու և Հայաստանին Անտանտից կտրելու հարցը։

Թուրքերը սակայն համոզված էին, որ Անտանտի երկրները չեն միջամտի, այլապես պատերազմ չէին սկսի։ Նրանք հոկտեմբերին մեկ ավելորդ անգամ հնարավորություն ունեցան համոզվելու, որ Անգլիան և Ֆրանսիան ոչ միայն մտադիր չեն օգնելու հայերին, այլև փորձում են համաձայնության գալ Անկարայի հետ։ Հենց Անգլիայի համաձայնությամբ հոկտեմբերին սուլթանի կառավարության արտաքին և ներքին գործերի նախարարի պաշտոնը հանձնվեց քեմալականների շրջանում մեծ հարգանք վայելող Ահմեդ Իզզեդ փաշային, որը շուտով ժամանեց Անկարա և քեմալականներին փորձեց շրջել Անտանտի հետ համաձայնության կողմը։ Մ. Քեմալը գրում է, որ Իզզեդ փաշան բացարձակ կերպով իրենց առաջարկել է գործել միասին։[8]

Իսկ դա նշանակում էր, որ Անգլիան ու նրա դաշնակիցները, որոնք հանդիսավոր կերպով իրենց ստորագրություններն էին դրել Սևրի դաշնագրի տակ, մտադիր չէին օգնելու Հայաստանին։ Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Թուրքիայի արևմտյան ճակատում հունական զորքերն այդ ամբողջ ժամանակամիջոցում զարմանալի հանգստություն էին պահպանել, որևէ ակտիվ գործողություն չէին

[8] Տես Кемаль М. Путь новой Турции, т 3 էջ 136

ծավալել, ասես դրանով հնարավորություն տալով Անկարային ամբողջ ուշադրությունը բևեռել արևելյան ճակատի վրա: Չէին շարժվել, որովհետև այդպես էր ցանկանում Անգլիան: Զոհաբերելով Հայաստանը նա փորձում էր քեմալականներին տրամադրել Ռուսաստանի դեմ: Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի կառավարությունը կոչով դիմեց եվրոպական տերություններին՝ խնդրելով օգնություն հայ ժողովրդի գլխին կախված ահավոր վտանգը վերացնելու համար: Սեպտեմբերի 28-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին, որպեսզի վերջինս օգնության խնդրանքով անմիջապես դիմի Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի ու Վրանգելի ներկայացուցիչներին (զենք ու զինամթերք տրամադրել կամ Տրապիզոնի մոտ դեսանտ ափ հանել):[9]

Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը կառավարության հանձնարարությամբ տեսակցում է ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչներին, խնդրում իրական օգնություն:

Ոչ Անգլիան, ոչ Ֆրանսիան օգնության ոչ մի իրական քայլ չեն ձեռնարկում մեկ վկայակոչելով այն, որ քեմալական Թուրքիան «կազմակերպված պետություն չէ», և նրա վրա «տնտեսական կամ որևէ այլ միջոցով ճնշում գործադրել հնարավոր չէ», մեկ այն, որ «Ազգերի լիգան իր տրամադրության տակ զինված ուժեր չունի»: Փաստերը ցույց են տալիս, որ նրանք ոչ թե չէին կարող, այլ չէին ցանկանում օգնել:

1920թ. հոկտեմբերին, երբ շարունակվում էր թուրք-հայկական պատերազմը, կարևոր իրադարձություններից էին Բ. Լեգրանի և Շանթի պատվիրակությունների միջև Երևանում տեղի ունեցած բանակցությունները: Դրանց նպատակը հայ-ռուսական պայմանագրի ստորագրումն էր, ինչը նախատեսված էր Թիֆլիսի օգոստոսի 10-ի համաձայնագրով:

Բ. Լեգրանի պատվիրակությունը Երևան ժամանեց հոկտեմբերի 11-ին և ինչպես ՀՏերտերյանն է վկայում, առանց գնացքից իջնելու վերջնագրի բնույթ կրող հուշագիր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը հրաժարվի Սևրի պայմանագրից, ազատ տարանցման իրավունք տա դեպի Թուրքիա, հարևանների հետ տարածքային վեճերի լուծման խնդիրը հանձնի Ռուսաստանի իրավասությանը: Ս. Վրացյանը գրում

[9] Տես ՀԱ. Ա. ֆ 200գ 1գ 486 (մաս Դ) թ 260

է, որ կառավարությունը մերժեց հուշագրի առաջին կետը, իսկ մյուսների վերաբերյալ տվեց իր համաձայնությունը:[10]

Բանակցությունները սկսվեցին հոկտեմբերի 13-ին և ավարտվեցին նույն ամսվա 28-ին: Հայաստանը ներկայացնում էին Մոսկվայում բանակցություններ վարած Լ. Շանթը, Լ. Զարաֆյանը, Հ. Տերտերյանը, իսկ Ռուսաստանը՝ Բ. Լեգրանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Օ. Ալինը և Բոբրիչևը: Հայկական կողմը առանձնապես չի ձգտել Բ. Լեգրանի հետ համաձայնության գալու, Երևան ժամանած անգլիական կոմիսար Ք. Ստոքսի խորհրդով անընդունելի պայմաններ է առաջադրել և բանակցությունների ընթացքում փորձել ստեղծել հայ-վարցական դաշինք ընդդեմ Ռուսաստանի:

Բ. Լեգրանը չընդհատեց բանակցությունները, ամեն կերպ ցանկանում էր համաձայնության եզր գտնել: Եվ նախապատրաստվեց ՌՍԴԽՀ և Հայաստանի միջև պայմանագրի նախագիծ, որը բաղկացած էր 17 հոդվածից և կից 2 լրացումից: Հոդվածները նախատեսում էին՝ ՌՍԴԽՀ-ը ճանաչում էր Հայաստանի անկախությունը, ընդ որում հոդվածի մեջ նշված էր, Ռուսաստանն արդարացի է համարում Արևմտյան Հայաստանի մարզերի միացումը Հայաստանի Հանրապետությանը, և ինքը բարեկամական ազդեցություն կգործադրի իր դաշնակիցների վրա այդ մարզերը կամ դրանց մի մասը Հայաստանի Հանրապետությանը միացնելու համար: ՌՍԴԽՀ-ը պարտավորվում էր չմիջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին: Սահմանը Հայաստանի և Ադրբեջանի միջև պետք է որոշվեր նրանց ներկայացուցիչների խորհրդաժողովում ՌՍԴԽՀ ներկայացուցչի մասնակցությամբ, իսկ համաձայնություն չկայացնելու դեպքում Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի պատկանելիությունը պետք է լուծվեր հանրաքվեով:

Բանակցությունների ավարտից անմիջապես հետո Բ. Լեգրանը հեռագրում է Գ. Չիչերինին, մեկնաբանում պայմանագրի գլխավոր կետերը, համարում դրանք հաջողություն և գտնում, որ պայմանագիրն անպայման պետք է ստորագրել, անգամ եթե Թուրքիան խաղաղասիրական ձգտումներ հանդես չբերի:[11]

Նոյեմբերի 1-ին Լեգրանը մեկնում է Բաքու ՌՍԴԽՀ և Ադրբեջանական ՍԽՀ համաձայնությունը ստանալու նպատակով: Սակայն նոյեմբերի 4-ին գումարված

---

[10] Տես Վրացեան Ս. , Հայաստանի Հանրապետություն, էջ 458

[11] Տես Геноцид армян: ответственность Турсии, т 2, ч 1 док 864-865 էջ 209-210

ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի միացյալ նիստը, որին մասնակցում էր նաև Ի. Ստալինը մերժում է պայմանագիրը պատճառաբանելով, թե Զանգեզուրի և Նախիջևանի հանձնումը Հայաստանին ձեռնատու չէ ոչ քաղաքական և ոչ էլ ռազմական առումով:[12]

1920թ. հոկտեմբերի 28-ին սկսվեց թուրք-հայկական պատերազմի վճռական փուլը: Այդ օրը թուրքական վերախմբավորված ուժերը Կարսի ճակատում անցան հարձակման երկու թևերում և ամբողջ օրը տևած թեժ կռիվներից հետո ձախ թևում կարողացան շրջանցել Կարսի պաշտպանությունը հարավ-արևելքից ու դուրս գալ Վեզինքորի բարձունքները, որով իրական վտանգ էր ստեղծվում քաղաքի համար: Հայկական բանակի հրամանատարությունը աչքաթող էր արել թուրքերի կողմից Կարսը հարավ-արևելքից շրջանցելու հնարավորությունը: Դրա համար էլ Մեծ Նազնի և Փոքր Մազնի լեռների բարձունքները և Սուբատան գյուղը փաստորեն, մնացել էին անպաշտպան: Ք. Կարաբեքիրը քաջատեղյակ տեղանքին որոշեց տիրանալ Վեզինքոյին և այդ խոցելի կողմից գրոհել Կարսի վրա: Հայկական հրամանատարությունը մնում էր այն համոզման, որ թուրքերը կփորձեն Կարսը գրավել Հարամ-Վարդանի և Վլադի-Կարսի կողմից, իսկ Վեզինքոյի գրավումը համարում էին ուշադրությունը շեղելուն ուղղված ռազմական գործողություն: Դրա համար էլ հիմնական ուժերը պահելով նշված գծում Վեզինքոյի դեմ ուղարկվեց գնդապետ Մազմանյանի գունդը միաժամանակ խնդրելով Մ. Սիլիկյանին օգնական ուժեր ուղարկել Մեծ Մազնիի դեմ թշնամուն թիկունքից ևս հարվածելու համար: Սակայն օգնության ուղարկված գնդապետ Կ. Հասան-Փաշայանի զորամասը ուշացավ, իսկ Մազմանյանի գունդը ոչ միայն չկարողացավ դուրս շպրտել թշնամուն Վեզինքոյից, այլև պարտվեց ու բռնեց նահանջի ճանապարհը:

Հոկտեմբերի 29-ին կռիվները շարունակվեցին առանց կողմերի զբաղեցրած դիրքերի մեջ էական փոփոխություններ առաջացնելու: Հայկական հրամանատարությունը ծրագրել էր հոկտեմբերի 30-ին հակահարձակման անցնել, սակայն թուրքերն ավելի շուտ սկսեցին հարձակումը բոլոր երեք ուղղությունների Հարամ-Վարդանի, Բեգլի-Ահմեդի և Վեզինքոյի վրա: Մարտերը դաժան բնույթ ստացան: Մի քանի ժամ անընդհատ Կարսը պաշտպանող զորքերը հաջողությամբ հետ

[12] Տես նույն տեղում վավ. 867 էջ 211-212

էին մղում թուրքերի մեկը մյուսին հաջորդող գրոհները։ Թուրքական զորքի հարվածը շատ ուժգին եղավ, արագ ու համատեղ շարժումներով նրանց զորքը շուտով բերդ մտավ և գրավեց բերդը։ Հայկական զորքերը սկսեցին բռնել նահանջի ճանապարհը։

Զորքը կորցրել էր հավատը հաղթանակի նկատմամբ։ Հրամանատարները թևաթափ էին եղել և պահանջում էին կնքել հաշտություն։ Կ. Սասունին վկայում է, որ գեներալ Մ. Սիլիկյանը հարցում ուղղեց հրամանատարներ Ա. Հովսեփյանին Սեպուհին և Սմբատին՝ պարզելու նրանց կարծիքը։ Երեքի պատասխանն էլ նույնն էր՝ բանակը քայքայվում է, պատերազմը շարունակել հնարավոր չէ։ Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը, որ Ալեքսանդրապոլ էր ժամանել հրամանատարությունը ստանձնելու և պատերազմը շարունակելու նպատակով, հրաժարվեց իր մտադրությունից։ Կորցնելով թշնամուն դիմագրավելու հույսերը Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 3-ին որոշում է զինադադար խնդրել թուրքերից։ Նոյեմբերի 5-ին հայկական կողմի զինադադարի առաջարկությունը հանձնվում է թուրքերին։ Ք. Կայարեքիրը հայտնում է, որ ստացել է զինադադարի մասին առաջարկությունը և հեռագրով հաղորդել Անկարա մինչև պատասխանի ստացումը ինքը համաձայն է դադարեցնել ռազմական գործողությունները պայմանով, որ Արփաչայից արևմուտք գտնվող հայկական ուժերը պետք է հետ քաշվեն Արփաչայից դեպի արևելք 15կմ մաքրելով նաև Ալեքսանդրապոլ քաղաքը, որը թուրքերը չեն գրավի, բայց նրա շրջանը 10կմ տարածությամբ պետք է գտնվի թուրքական վերահսկողության տակ։ Պատասխանի համար ժամկետ էր սահմանված նոյեմբերի 7-ի առավոտյան ժամը 8-ը։

Նոյեմբերի 7-ի վաղ առավոտյան Հայաստանի կառավարությունը հայտնում է իր համաձայնությունը և սկսում իրագործել զինադադարի պայմանները։

Թողնելով Արփաչայն ու Ալեքսանդրապոլը, հայկական զորքերը հետ քաշվեցին աջ թևում դեպի Ջաջուռ փակելու դեպի Ղարաքիլիսա տանող ուղիները, ձախ թևում դեպի Աղին կայարան՝ Արարատյան դաշտ տանող երկաթուղու ուղղությամբ, կենտրոնում Հոռոմ գյուղը՝ բռնելու Արագածի փեշերը։ Ալեքսանդրապոլը թողնելը վտանգավոր վիճակ էր ստեղծում նաև Իգդիրի ճակատի համար։ Ուստի հայկական զորքերը թողեցին Արաքսի աջ ափը և այրելով Մարգարայի կամուրջը հաստատվեցին ձախ ափին։

Սակայն նոյեմբերի 8-ին Անկարայի կառավարությունը ներկայացնում է զինադադարի նոր պայմաններ, որոնք շատ ավելի ծանր էին, քան Ք. Կարաբեքիրի ներկայացրածը։ Զինադադարի թուրքական նոր պայմանները, փաստորեն կապիտուլյացիայի պահանջ էին։ Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 10-ի նոտայով, հայտնելով իր կողմից նոյեմբերի 6-ի զինադադարի պայմանների կատարման մասին, մերժում է այն և ռազմական գործողությունները վերսկսվում են։

Նոյեմբերի 13-ին Անկարան նոտայով դիմում է Հայաստանի կառավարությանը փորձում համոզել, որ ընդունի զինադադարի նոյեմբերի 8-ի պայմանները։ Միաժամանակ թուրքական բանակը նոյեմբերի 13-ին և 14-ին ընդհանուր հարձակման է անցնում Ջաջուռի և Աղինի ճակատներում։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նոյեմբերի կեսերին Հայաստանում ստեղծված իրադրության պայմաններում ռուսական ռազմական օգնությունը միակ միջոցն էր, որ կարող էր զսպել թուրքերին։ Ռուսական բանակի ներկայությունը կգոտեպնդեր հայ զինվորներին, թուրքերը ստիպված կլինեին կանգնեցնել հարձակումը և համաձայնել ռուսների միջնորդությանը, ինչի շնորհիվ հայերը կխուսափեն զինադադարի ծանր պայմաններից և առավել կարևոր է, հաշտության բանակցությունները կընթանային ռուսների մասնակցությամբ։ Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը գումարված նիստում որոշում կայացրեց անմիջական բանակցությունների մեջ մտնել Թուրքիայի հետ առանց երրորդ կողմի մասնակցության։

Նոյեմբերի 16-ին ներքին գործերի նախարար Ս. Արարատյանը մեկնեց ռազմաճակատ իր հետ տանելով զինադադարի թուրքական պայմաններն ընդունելու մասին կառավարության որոշումը և գլխավոր հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի նամակը Ք. Կարաբեքիրին։ Նոյեմբերի 17-ին կապիտան Յաբլոկովը Ալեքսանդրապոլում ծրարները հանձնում է Ք. Կարաբեքիրին, իսկ արդեն 18-ին Ալեքսանդրապոլ է ժամանում Ս. Արարատյանը և ստորագրում զինադադարի համաձայնագիրը։ Անկարայի հետ, առանց երրորդ կողմի մասնակցության, բանակցությունների մեջ մտնելու վերաբերյալ որոշում կայացնելով և այդ մասին Ս. Արարատյանի միջոցով Ք. Կարաբեքիրին հայտնելով հանդերձ, Հայաստանի կառավարությունը, այնուամենայնիվ, Թիֆլիս գործուղեց Ա. Խատիսյանին հայտնելու անգլիացիների ու ֆրանսիացիների դիվանագիտական աջակցությունն

Ալեքսանդրապոլում սկսվելիք հաշտության բանակցություններին։ Սակայն այս անգամ էլ Անգլիան ու Ֆրանսիան հուսախաբ արեցին իրենց կրտսեր դաշնակցին։ Խորհրդաժողովի առաջին պաշտոնական նիստը գումարվեց նոյեմբերի 25-ին լիազորությունների փոխանակության արարողությունից հետո։

Նոյեմբերի 30-ի երեկոյան Ք. Կարաբեքիրը ներկայացնում է պայմանագրի թուրքական նախագիծը, ըստ որի սահմանը Թուրքիայի և Հայաստանի միջև անցնում էր Արփաչայ և Արաքս գետերով։ Շարուր-Նախիջևանն ինքնավարության պատրվակով դրվում էր Թուրքիայի հովանավորության ներքո։ Հայաստանը կարող էր ունենալ միայն 1200 զինվոր, 20 գնդացիր, 8 թնդանոթ, խզելու էր իր բոլոր կապերը Անտանտի տերությունների հետ։ Մինչ շարունակվում էր Ալեքսանդրապոլի խորհրդաժողովը, իսկ Երևանում Բ. Լեգրանը Ս. Վրացյանին համոզում էր հետ կանչել Ա. Խատիսյանի պատվիրակությունը և ռուսական բանակի զորամասեր մտցնել Հայաստան ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն և Բաքվում կազմավորված Հայաստանի հեղափոխական կոմիտեն (Հայհեղկոմ) իրենց հերթին Հայաստանը զենքի ուժով խորհրդայնացնելու նախապատրաստություն էին տեսնում։ 1920թ. նոյեմբերի 29-ին վաղ առավոտյան, Հայհեղկոմը Ղազախից մտել էր Իջևան և Հայաստանը հռչակել խորհրդային հանրապետություն։ Տեղեկանալով այդ մասին Ս. Վրացյանը իսկույն դիմում է Բ. Լեգրանին, պահանջում դուրս բերել ռուսական զորամասերը Իջևանից։ Բ. Լեգրանը դա թյուրիմացություն է համարում, խոստանում է կապվել Օրջոնոկիձեի հետ և հարթել միջադեպը։ Սակայն Բ. Լեգրանի համար անսպասելի Օրջոնոկիձեն պատասխանում է, թե կարմիր զորամասերի մուտքն Իջևան թյուրիմացության արդյունք չէ, որ որոշում կա Հայաստանը խորհրդայնացնելու մասին, և հանձնարարում է անմիջապես դիմել Ս. Վրացյանին ու պահանջել շտապ պատասխան՝ իշխանությունը հանձնում են խաղաղ ճանապարհով՝ թե ոչ։ Բանակցությունները Բ. Լեգրանի հետ շատ արագ ավարտվեցին, և պատմության մեջ Լեգրան-Դրո անվանումը ստացած համաձայնագրի ստորագրումը նշանակված էր դեկտեմբերի 2-ի գիշերվա ժամը 12-ին։ Սակայն Լեգրանի պահանջով պայմանաժամը փոխվում է և համաձայնագիրը ստորագրվում է դեկտեմբերի 2-ին կեսօրից հետո ժամը 2-ին։ Դա պետք է լիներ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության վերջին գործողությունը, բայց այդպես չեղավ. նրա կեղմից լիազորված

պատվիրակությունն Ալեքսանդրապոլում շարունակում էր բանակցությունները և պատրաստվում կառավարության անունից պայմանագրի ստորագրմանը։

Դեկտեմբերի 2-ի երեկոյան Ք. Կարաբեքիրը իբր գումարել էր խորհրդաժողովի վերջին նիստը, որտեղ Ս. Խատիսյանը հայտարարել է, որ ընդունում են պայմանագրի թուրքական նախագիծը։ Նիստը տևել է մինչև դեկտեմբերի 3-ի գիշերվա ժամը 2-ը, որի ընթացքում քննարկվել են պայմանագրի կետերը, բայց ըստ երևույթին, այն ձևական բնույթ է կրել, որովհետև պայմանագրի մեջ էական փոփոխություններ չեն մտել։ Դեկտեմբեր 2-ի լույս 3-ի գիշերն այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրեց հայ-թուրքական պայմանագիր։

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին ծանր դրությունը 1920թ. նոյեմբերի կեսերին Հայաստանի ներքաղաքական կյանքում առաջ բերեց քաղաքական որոշ վերաձևումների անհրաժեշտություն։ Հայաստանի խորհրդարանի նոյեմբերի 23-ի արտակարգ նիստում քննարկվեց և ընդունվեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը, նոր նախարարապետ ընդունվեց Սիմոն Վրացյանը։ Նոյեմբերի 24-ին հաստատվեց նաև վերջինիս կողմից ներկայացված կառավարության նոր կազմը։ Նրանում ընդգրկվեցին քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող գործիչները, որոնց մի մասը ներկայացվում է որպես «ռուսական կողմնորոշման ջատագովներ» (Դ. Կանայան, Հ. Տերտերյան), սակայն դա արմատական փոփոխություն չմտցրեց հանրապետության արտաքին քաղաքական կուրսում։ Նորանշանակ կառավարության արտաքին քաղաքական առաջին քայլը հանդիսացավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին ուղղված նամակը՝ հաշտության երկկողմանի բանակցություններ սկսելու առաջարկությամբ։

Հայտնվելով քեմալաբոլշևիկյան ռազմադիվանագիտական ուժգին ճնշումների տակ՝ Հայաստանի իշխանությունները փորձում էին հայ-ռուսական և հայ-թուրքական անմիջական բանակցությունների միջոցով ելք գտնել դժվարին կացությունից։ Նրանք չէին գիտակցում իրավիճակի ողջ լրջությունը, այժմ 1920թ. ամառը չէր, երբ Հայաստանի թե քաղաքական, թե ռազմական դրությունը համեմատաբար կայուն էր։ Ժամանակն անվերադարձ կորսված էր, թուրքական զորքերն իրենց մահաբեր

ներխուժման սպառնալիքի տակ էին պահում Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը, վերջնականապես երես էր թեքել և իր անզորության մասին հայտնել «քաղաքակիրթ Եվրոպան»։ Իսկ Ռուսաստանն անցել էր Հայաստանը խորհրդայնացնելու գործնական քայլերին։

1920թ. նոյեմբերի 29-ին «Հատուկ-գնդի» ուղեկցությամբ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկյան հայտնի գործիչ Սարգիս Կասյանի նախագահությամբ, Ադրբեջանից (Ղազախից) մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խարհրդային հանրապետություն։[13]

1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվում է «Համաձայնագիր ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև»։ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Հայաստանը հայտարարվում է «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն»։ Նախկին կառավարությունը հեռանում է իշխանությունից, մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան այն անցնում է զինվորական հրամանատարության, Դրոյի և ՌՍԴԽՀ կոմիսար Օ. Սիլինի համատեղ գլխավորությամբ։ Վերջիններս էլ, հիմք ընդունելով հայ-ռուսական համաձայնագիրը, նույն օրը դեկտեմբերի 2-ին, ստորագրում են «Հրաման Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» փաստաթուղթը։ 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով և դրան հետևած «Հրամանով» Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն։ Այն թեև պարտադրված էր դրսի ուժի դիրքերից, սակայն իրականացվեց իրավական տարրին համապատասխան։ Հայոց պետականության պատմության մեջ Հայաստանի առաջին Հանրապետությունն իր տեղը զիջեց Հայաստանի երկրորդ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը։

Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր։ Ջեմալաբոլշևիկյան

[13] Հեղափոխական կոմիտեներ Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու 1920թ. նոյեմբեր – 1922 հունվար) Երևան 1974 էջ 27

հակաքաղաքական ուժերի ճնշման տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի առաջին Հանրապետությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դաշնակից համարվող Անտանտի տերությունները, ելնելով իրենց ծավալապաշտական շահերից, ձգձգում էին հայ ժողովրդի գերագույն բաղձանքի՝ միացյալ Հայաստանի կայացումը և ճնշումը: Նրանք նույնիսկ ձգձգեցին Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումը այնքան ժամանակ, մինչև Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակը, ջախջախելով Դենիկինին, մուտք գործեց Հյուսիսային Կովկաս: Միայն դրանից հետո Անտանտը փաստացի ճանաչեց Անդրկովկասի հանրապետությունները, որպեսզի այդ կերպ նրանց սիրաշահելով հակախորհրդային միացյալ ճակատ կազմի և թույլ չտա կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս: Անկախ Արևմուտքի տերությունների, քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի հետապնդած նպատակներից, Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետությունների բնորոշ բոլոր հատկանիշներով՝ միջազգային իրավական ճանաչմամբ, պետահիրավական, քաղաքական ու տնտեսական համակարգերով, դիվանագիտական կապերով կազմակերպված պետականություն էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Մ. Հայաստանը 1912-1920թթ. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան 2003
2. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ., Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան 2007թ.
3. Հայոց պատմություն հատոր VI նորագույն շրջան (1918-1945թթ.) Երևան 2010
4. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Երևան 2005թ. հատոր I, Առաջին տարին 1918-1919թթ.
5. Վրացյան Ս.Հայաստանի առաջին հանրապետությունը